Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-1005-25.10.2010,06.05.2011-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ Օրենք) 6-րդ հոդվածի «զ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<կենդանական աշխարհի պաշարների օգտագործման պայմանագրեր կնքելը>>:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առեւտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված վայրի կենդանիների, դրանց մասերի եւ ածանցյալների արտահանումն ու ներմուծումն իրականացվում է կոնվենցիայով սահմանված պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

Վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումը ու դրանց պահումն անազատ պայմաններում կամ վերաբնակեցումն ազատ պայմաններում իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների արտահանման: Գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների արտահանման համար հիմք է հանդիսանում, լիազորված մարմնի հետ վայրի կենդանիների օգտագործման նպատակով կնքված պայմանագիրը՝ դրանում նշված տեսակներին և քանակներին համապատասխան:

Կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանումը և ներմուծումն իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա»:

2) 3-րդ մասից հանել «Լիցենզիաներ տալու եւ» բառերը

3) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

Առաջարկության հեղինակը		Առաջարկության բովանդակությունը	Արդյունքը
ՀՀ կառավարություն	1.	Նախագծի 2-րդ հոդվածը, օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված վայրի կենդանիների, դրանց մասերի և ածանցյալների արտահանումն ու ներմուծումն իրականացվում է կոնվենցիայով սահմանված պահանջներին համապատասխան՝ *Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:* Վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումն ու դրանց պահումն անազատ պայմաններում կամ վերաբնակեցումն ազատ պայմաններում իրականացվում է *լիազորված մարմնի թույտվությամբ*՝Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների արտահանման: Գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների արտահանման համար հիմք է հանդիսանում, լիազորված մարմնի հետ վայրի կենդանիների օգտագործման նպատակով կնքված պայմանագիրը՝դրանում նշված տեսակներին և քանակներին համապատասխան: Կենդանական հավաքածուների կամ առանձին նշումների արտահանումը ու ներմուծումն իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:	Առաջարկությունը ընդունվել է մասամբ: Հոդվածում նշված գործառույթը նպատակահարմար ենք գտնում իրականացնել <Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով> :
	2.	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետից հանել <կամ նրա կողմից վերալիազորված> բառերը, քանի որ պետական մարմնի լիազորությունները այլ մարմնի փոխանցելը համարում ենք ոչ նպատակահարմար	Առաջարկությունը ընդունվել է:
	3.	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը խմբագրել՝ նկատի ունենալով, որ, առաջարկվող փոփոխության արդյունքում կենդանական աշխարհի օբյեկտների գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման դեպքում պետական տուրք չի գանձվի:	Առաջարկությունը չի ընդունվել:
Աժ պատգամավոր Խ.Հարությունյան		Նախագծի 1-ին հոդվածը, օրենքի 6-րդ հոդվածի զ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝«կենդանական աշխարհի պաշարների օգտագործման պայմանագրեր կնքելը»:	Առաջարկությունը ընդունվել է:
Աժ պատգամավոր Խ.Հարությունյան		Նախագծի 3-րդ հոդվածը, օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝«Օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի հետ կնքված պայմամագրերի հիման վրա»:	Առաջարկությունը ընդունվել է: